

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՐԱՆԻՍՈՒԹԻՒՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԻԵՆՆԱՑԻՈՑ

Ի ԳՐԱԾԱՅԵՓԵՈՒԹՊԱՂԱԴՐ

Ոչխատութիւնն՝ հրապարակաւ վարձատրել, աշակերտներն ուսման եռանդով խանդավառել, այս է այն նպատակն՝ որով Բանկալթիի քարձունքն խուռնընթաց կը լեցուի ամէն տարի՝ ընտիր դասակարգի վերաքերեալ ուսումնասէր բազմութիւն մը. եւ փորձառուն գիտէ միայն թէ ինչպէս յեռանդ կը գրգռի մասնկտին յիշելով այն օրն՝ յորում՝ այնչափ մարդկան առջեւ իւր ուսումնասիրութեան եւ յառաջադիմութեան համար պիտի քաղէ ծափահարութեանց կայծիւններով առատատուր ընծաներու եւ միջանակներու ժողոված մը, եւ կամ՝ շիկնեալ պատկառաղէմ՝ պարսաւադիր նայուածքներու նշապակ պիտի ըլլայ:

Այսպիսի օր մը եղաւ Յուլիս ամսոյ 2/14ը:

Ըստ կանխամիտ սովորութեան լայնածաւալ պարտիզին մէկ անկիւնն պատրաստուած էր՝ վրանայարկ եւ դրօշագարդ, ընդունելու հրաիլեալներն, որ որոշեալ ժամուն (2ին ըստ Եւր.) տոմսակ ի ձեռին սկսան արագաքայլ դիմել եւ աթոռ մը գրաւել:

Գրեթէ կէս ժամու մէջ դադրեցաւ շառաչող կառաց անուոց շփոխն, եւ անշուշտ լռութեամբ կը սպասուէր Հանդիսութեան զահրեթն Գերերջ. Հոգեւոր Տէրն Պետրոս Ժ. Ազարեան՝ Կաթող. Պատրիարքն: Ժամացուցին 2 զարնելն նշան էր կարծես երաժշտաց խմբին ալ սկսելուն: Հագիւ թէ Գահրեթն հանդիսավայրը կը մտնէր եւ իսկոյն խուռն բազմութեան մը կողմէն ողջունուեցաւ յարգանաց ողջոյններով, իսկ նուագախմբէն՝ Համիտիէ մարշով:

Հանդիսականաց մէջ կը նշմարուէին Աղէքսանդրիոյ Արքեպիսկոպոսն՝ Աբշէ-հիրեան Բառնաբաս Գերապայծառն, եւ հայ կաթողիկէ եւ լատին կղերին բազմաթիւ ներկայացուցիչներն. նոյնպէս Մէարիֆի պաշտօնեաներէն Էսսէթ Էֆ., Աւստրիական հիւպատոսարանէն՝ Մ. Վէկ-պէրէր, մէրթիպի հարպիլէյէն քարձրաստիճան Պէյեր, Մըսըրը Օննիկ Պէյ, Մուրատեան Մըկըր Էֆ., Թընկըր Սիմին Էֆ. Փանոսեան Էֆ., Alliance françaiseի ընդհ. քարտուղարն Մ. Պոսսի, եւ այլ շատեր, որոնց յակնէ յանուանէ յիշատակութիւնն տեղական թերթերու՝ եւ ոչ թէ թղթակցութեանս գործ է. միայն այսչափն ըսենք թէ 1200 հոգի հաճած էին այս հանդիսութիւնս պատուել:

Գրաքար ոտանաւորով մը սկիզբ տրուեցաւ հանդիսին, որուն յաջորդեցին քառածայն խմբերգ մը, աշխարհաքար խօսակցութիւն մը, մեանաւագ երգեր, քառածոն դաշնակ, քնար եւ դաշնակ, խմբերգներ եւն. եւն: Հանդիսին փայլն աւելի կը պայծառանար՝ Concordiaի խմբին՝ Վարժարանիս քնարի ուսուցչին M. Catalaniի

առաջնորդութեամբ՝ նուազած Jeanne d'Arc նուազախաղով, Lucie de Lammermoornով եւ մանաւանդ Վալենսերի՝ Waldteufel Walzernով եւ J. Straussի Polkainերով:

Եւ ահա պատկեալ (շքնասաւարտ) աշակերտներէն միմ Գր. Բափիկ Ապտուլ-լաւնան կարողաց նամուօտ տեսութիւն մը գաղղ. լեզուա գաղղիայի արդի վիպաս-դիրներու վրայ, եւ Գր. Անտոն Գրուլսկիման նայալէս պատկեալ մը՝ գերմաներէն լեզուա, գերմանացի 6 մասնակազրաց վրայ տեսութիւն մը, որ իրենց իրր վկայա-գրի thèse տրուած էր:

Ասից յաջորդեց Վարժարանի Վարչին տեղեկագիրն որ մայրենի լեզուն ուսման կարեւորութիւնն եւ մանաւանդ ուրիշ լեզուներ սովորելու համար ընծայած դիւրամատոյց նպատտն կը յիշեցնէր հանդիսականաց, ցոյց տալով համոզակեր պատճառարանութեամբ իսկ միտքն միայն գաղղ. եւ կամ՝ անգլ. եւ կամ՝ գերմ. պաշարով սնուցանել ուղղներուն անյաշող եւ զոնէ տարակուսական քայլն: Այս տեղեկագրին յաջորդեց միջանակաբաշխութիւնն:

Շատ երկարածի՞ք կ'ըլլար ըսողը միջանակառու աշակերտաց անուանքն յի-շատակելն անգամ՝ պիտի ջանանք նամուօտիւ երեսելիներն անուանել:

Դ Ա Մ Փ Ի Լ Ն Ո Փ Ա Յ Ո Ի Թ Ե Ն

Բափիկ Ապտուլ-լաւնան. Ա. մրցանակ Առողջաբանութեան, Վաճառականական օրինաց, Տարրագիտու-թեան, Գաղղ. լեզուի (որուն համար ընդունեցաւ նաեւ Alliance Françaiseի կողմէ նուիրեալ Ա. մրցանակն), Բ. մրցանակ Նկարազարկան Երկրաշարժութեան, Բ. Բնապատմութեան, Բ. Գրագիտութեան, Բ. Հայերէնի, Բ. Գերմաներէնի, Բ. կարգի վկայագիր:

Անտոն Գրուլսկիման. Ա. սրբանակ Նկար. Երկրաշարժութեան, Տարրագիտութեան (որուն համար ընդունեցաւ նաեւ Վսեմ. Արիստակէս Ազարեանի կողմէ նուիրեալ ծանրաշաղ մը մետաղեայ.) Հայերէնի, Տափ-կերէնի, Գերմաներէնի, Վաճառականական օրինաց, Բ. Բնապատմութեան, Զաղաքական օրինաց, Առողջաբա-նութեան, Միջնաբանութեան, Ա. կարգի վկայագիր:

Դ Ա Մ Գ Ի Լ Ն Ո Փ Ա Յ Ո Ի Թ Ե Ն

Գեորգ Գրուլսկիման. Ա. մրցանակ Պատմութեան, Գրահաշուի, Բուսաբանութեան, Բնագիտութեան, Գերմաներէնի, Կրօնագիտութեան, Աշխարհագրութեան, Ներկաշարժութեան, Գրագիտութեան, Բ. Թուաբանութեան, Հաշուակալութեան, Տաճկերէնի, Գաղղ. Ա. կարգի վկայագիր:

Յովսէփ Գալուսեան. Ա. մրցանակ Աշխարհագրութեան, Պատմութեան, Բուսաբանութեան, Հայերէնի, Տաճկերէնի (որուն համար ընդունեցաւ նաեւ Նախկին աշակերտաց կողմէ նուիրեալ ոսկի ժամացոյց մը), Գործ-ծական երաժշտութեան, Գրծագիտութեան, Հաշուակալութեան, Գերմաներէնի, Բ. Թուաբանութեան, Բնագի-տութեան, Գաղղիերէնի, Հայնական երաժշտութեան, Գծագրութեան, Ա. կարգի վկայագիր:

Արմենակ Փրնտրոյեան. Ա. մրցանակ Հայնական երաժշտութեան, Գծագրութեան (որուն համար ըն-դունեցաւ նաեւ Վսեմ. Արիստակէս Ազարեան Էֆի կողմանէն նուիրեալ Ներկերու Թաղկազին տուի մը), Գ. կարգի վկայագիր:

Գեորգ Մեյախեան. Ա. մրցանակ Գրծագիտութեան, Աշխարհագրութեան, Պատմութեան, Թուաբանութեան, Գրահաշուի, Երկրաշարժութեան (ընդունեցաւ նաեւ Վսեմ. Արիստակէս Ազարեանի կողմանէն նուիրեալ կաշկերի մեծագին տուի մը), Բուսաբանութեան, Բնագիտութեան, Հաշուակալութեան, Հայերէնի, Տաճկերէնի, Գաղղիերէնի, Գերմաներէնի, Գործ. երաժշտութեան, Բ. Գրագիտութեան, Ա. կարգի վկայագիր:

Դ Ա Մ Դ. Տ Ա Բ Ի Ո Յ Զ Ե Բ Ա Վ Ա Ն Ո Ի Թ Ե Ն

Սաիդ Մեհադա. Բարի վարուց մեծ ոսկեման ժապաւէնն առաւ. Ա. մրցանակ Աշխարհագրութեան, Պատմութեան, Բնագիտութեան, Հայերէնի, Տաճկերէնի, Գաղղիերէնի (որուն համար ընդունեցաւ նաեւ Alliance Françaiseի կողմանէն նուիրեալ Բ. մրցանակն), Բ. Կրօնագիտութեան, Բ. Թուաբանութեան, Բ. Գրահաշուի, Բ. Բնապատմութեան, Բ. Գերմաներէնի, Ա. կարգի վկայագիր:

Արտաշէս Կիսմաշեան. Ընդունեցաւ Վսեմ Փուլոյ. Ա. մրցանակն զոր պարգեւած էր Վիեննական Միջնաբանութեան Արքայալոյն Գեր. Գեր. Մարմ. Մարմնեան. Ա. մրցանակ Հայերէնի, Գրահաշուի, Տաճկերէնի, Աշ-խարհագրութեան, Երկրաշարժութեան, Բ. կարգի վկայագիր:

Յալոռքի՞ման Բիւրիսեանեան. Ընդունեցաւ Գերբը. Հոգեւոր Տեսանէն պարգեւեալ քարի վարուց մեծ միտաւն:

Դ Ա Մ Գ. Տ Ա Բ Ի Ո Յ Զ Ե Բ Ա Վ Ա Ն Ո Ի Թ Ե Ն

Երուսանդ Հալաճեան. Ա. մրցանակ Աշխարհագրութեան (որուն համար ընդունեցաւ նաեւ Վսեմ. Արիս-տակէս Էֆ. Ազարեանէ նուիրեալ երրորդունը մը), Բնագիտութեան, Հայերէնի, Գաղղ. Թուաբանութեան, Բ. Կրօնագիտութեան, Բ. Գերմաներէնի, Զայնական երաժշտութեան. Բ. կարգի վկայագիր:

Երուսաղիմի Եփրատյան, Ա. մրցանակ կրծագիտության, թուաբանության, Երկրաչափության, Գրահաշուի, Աշխարհագրության, Պատմության, Բնագիտության, Հայերենի, Գաղ. Թարգմանության. Գաղղիերենի Բ. Գերմաներենի. Ա. կարգի վկայագիր:

Ստեփան Եփրեմյան. Հնդկոնեցալ քաղ. վարուց մետաքսաշիւս մեծ ժառանգ. Ա. մրցանակ կրծագիտության, թուաբանության, Երկրաչափության, Գրահաշուի. Աշխարհագրության, Պատմության. Բնագիտության, Հայերենի, Գաղղ. Բ. Գաղ. Թարգմանության. Գերմաներենի. Ա. կարգի վկայագիր:

Հրաչյա Տեղադրական. Ա. մրցանակ կրծագիտության, թուաբանության. Երկրաչափության, Գրահաշուի, Աշխարհագրության. Բնագիտության. Բ. Հայերենի, Գաղղ. Թարգմանության. Ա. կարգի վկայագիր:

Դ Ա Մ Բ. Տ Ա Ր Ի Ո Յ Ը Ե Բ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն

Անտոն Գաթիկանյան. Ա. մրցանակ կրծագիտության, Երկրաչափության, Աշխարհագրության, Պատմության, Բնագիտության, Բնագիտության, Գրահաշուի, Գաղղ. Բ. Գաղ. Թարգմանության. Գերմաներենի. Ա. կարգի վկայագիր:

Հրաչյա Թորոնյան. Ա. մրցանակ Երկրաչափության, Բնագիտության, Բ. Պատմության, Բնագիտության, Գաղղիերենի. Ա. կարգի վկայագիր:

Ստեփան Եփրատյան. Հնդկոնեցալ "Վանս փոխը. արծաթաշիւս միտան Նուիրեալ Ի Գերբը. Հոգեւոր Տեսանք. Ա. մրցանակ կրծագիտության, Աշխարհագրության, Պատմության, Բնագիտության, Բնագիտության, Հայերենի, Տաճկերենի. Բ. կարգի վկայագիր:

Դ Ա Մ Ա. Տ Ա Ր Ի Ո Յ Ը Ե Բ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն

Քրիստիան Գաթիկանյան. Ա. մրցանակ թուաբանության, Տաճկերենի, Գ. Գրոց Պատմության, Աշխարհագրության. Բ. Հայերենի, Բ. Գաղղ. Թարգմանության. Բ. կարգի վկայագիր:

Ստեփան Թորոնյան. Ա. մրցանակ կրծագիտության, թուաբանության, Տաճկերենի, Գաղղ. Թարգմանության. Բ. Աշխարհագրության, Գաղղիերենի. Բ. կարգի վկայագիր:

Ն Ա Մ Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Դ Ա Մ

Յովսէփ Եփրատյան. Ա. մրցանակ կրծագիտության, Գաղղիերենի, Տաճկերենի. Բ. թուաբանության, Աշխարհագրության. Բ. կարգի վկայագիր:

Մրցանակներուն վերջինն կը տրուէր, երբ աշակերտներէն մին՝ Յովսէփ Գոյունեան, քաջաշինին առողջանութեամբ՝ Վեհափառ ինքնակալ Սուլթան Համիտ Բ.ի կենաց արեւատութեան ուղեծրական մաղթանք մը կարդաց, որ "ամէներ, կորզեց ունկնդրաց ճերմէն:

Որուն ի պատասխանի՝ Գերբըջանիկ Հոգեւոր Տէրն յառնկայս համառօտ քայց խմաստաւից խօսքով մը պատասխան տուաւ. իւր շնորհակալութիւնն յայտնեց Վարժարանի վարչութեան՝ որոց յառաջադիմութեան տարուած հոգին ու ինամից համար, եւ ինքն եւս Վեհափառ ինքնակալին ուսումնասէր ու ղալրոցաշէն կառավարութեան վրայ զովեստիւք լի ակնարկ մը նետելով, վերջ տուաւ խօսքին, տեղի տալով աշակերտաց խմբին, որ երգեց Համիտի մարջն:

Այսպէս Ձ ժամ խաղաղ ու զուարթ ժամանակ անցընելէն վերջը, սկսաւ քաղմութիւնը ցրուիլ, մրցանակառու աշակերտաց շնորհակալութեան յարգանքն հետը տանելով:

